ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման
(մրցույթ հայտարարող մարմնի անվանումը)
ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ՝				
	անվանումը և համարը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավարական կետ)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավարական կետ)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.	Եղեգնաձոր-Աղնջաձոր N 1	Եղեգնաձորի Ա.Կ	Աղնջաձոր	Միկրոավտոբուսային	2
2.	Եղեգնաձոր-Աղավնաձոր N 10	Եղեգնաձորի Ա.Կ	Աղավնաձոր	Միկրոավտոբուսային	2
3.	Եղեգնաձոր-Ելփին N 5	Եղեգնաձորի Ա.Կ	Ելփին	Միկրոավտոբուսային	2
4.	Վայք-Եղեգնաձոր N 30	Վայքի Ա.Կ	Եղեգնաձոր	Միկրոավտոբուսային	2
5.	Եղեգնաձոր-Վարդահովիտ N 2	Եղեգնաձորի Ա.Կ	Վարդահովիտ	Միկրոավտոբուսային	2
6.	Եղեգնաձոր-Մալիշկա N 16	Եղեգնաձորի Ա.Կ	Մալիշկա	Ավտոբուսային	2
7.	Եղեգնաձոր-Վերնաշեն N 15	Եղեգնաձորի Ա.Կ	Վերնաշեն	Ավտոբուսային	2

ՑԱՆԿ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
3. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
4. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
5. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
6. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
7. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
9. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
10. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 06. 05. 2015թ. ժամը 11-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարան, բացի շաբաթ և կիրակի օրերից ամեն օր ժամը 9 ⁰⁰ – 18 ⁰⁰ մինչև 29.04.2015թ.

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 0281 2- 55 -15 հեռախոսահամարով.

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ (ստորագրությունը) Խ. Ասլանյան (անունը, ազգանունը)